

Ժողովուրդ

50
(2900)

10 ապրիլի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՄԱՆԲԱՄԱՄՆԵՐ՝ ՓԱԿ ԲՆՆԱՐԿՈՒՄԻՑ



Երեկ խորհրդարանում ընդդիմադիր «Հայաստան» և «Պատիվ ունենալ» խմբակցությունների նախաձեռնությամբ փակ քննարկում տեղի ունեցավ՝ սահմանազատման և սահմանազծման թեմայով: Քննարկմանը մասնակցում էին արտգործնախարար Արարատ Միրզոյանը և փոխվարչապետ Միտր Գրիգորյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քննարկումը բավականին թեժ է անցել: Նախ, ի սկզբանե, ԲԳ-ականները ջանք չխնայեցին, որ Նիստը փակ ֆորմատով անցնի՝ պատճառաբանելով, թե գաղտնի հարցեր են քննարկելու: Ավելին՝ ընդդիմադիր մի քանի պատգամավորների՝ Սեյրան Օհանյանին, Լեւոն Քոչարյանին, Արմեն Գեորգյանին, Ասարամ Կրպեյանին, Արման Ղազարյանին, Միտր Մելքոնյանին, Արմեն Ռուստամյանին, Միտր Սահակյանին, Արթուր Սարգսյանին թույլ չտվեցին մասնակցել Նիստին՝ հիմնավորելով, որ նրանք գաղտնիության թույլտվություն չունեն:

ԲԳ-ից գաղտնիության թույլտվություն չունեցող Դավիթ Կարապետյանը, որը Նոր է ստանձնել մանդատը: Քննարկմանը իր ակտիվությամբ աչքի է ընկել Արարատ Միրզոյանը, որը ջանասիրաբար պաշտպանել է Փաշինյանի առաջ քաշած հակահայկական թեզերը: Փոխարենը՝ Միտր Գրիգորյան և կառուցողական վարքագիծ դրսևորել է ավելին՝ ընդդիմադիրներին ասել է, որ եթե էլի նման քննարկում նախաձեռնեն, կրկին պատրաստ է մասնակցելու:

Թե՛ Միրզոյանի, թե՛ Միտր Գրիգորյանի պատասխաններից պարզ է դարձել, որ իրականում, անգամ իշխանությունները չգիտեն՝ ի վերջո ինչ է սպասվում, երբ են մեկնարկելու սահմանազծման աշխատանքները, որ թվականի քարտեզներն են որպես իրավական հիմք ընդունվելու: Քննարկման ժամանակ ընդդիմադիրները մի քանի հարցեր են քարծրացրել առ այն, որ սահմանազծման և սահմանազատման աշխատանքների համար պետք է հիմք վերցնել 1993 թվականի սեպտեմբերի 24-ի դրությամբ հաստատված շփման գիծը, եւ որ մինչ սահմանազծումը, նախ պետք է Ադրբեջանին գուպել, ստիպել, որ դադարեցնի սահմանային սադրանքները, այլապես կստացվի, որ Հայաստանը սպառնալիքի ներքո է գնում սահմանազատման. սակայն իշխանականներն ակնարկել են, որ, ըստ էության, անգոր են այս հարցում:

Բացի այս, ընդդիմադիրները նաեւ նշել են, որ սահմանազատման անվան տակ չեն կարող տարածքներ զիջվել Ադրբեջանին՝ առանց հանրաքվեի:

Բարձրացված այս բոլոր հարցերին ի պատասխան՝ Արարատ Միրզոյանն ու Միտր Գրիգորյանն անորոշ պատասխաններ են տվել:

Տեղեկացանք նաեւ, որ Միրզոյանին և Գրիգորյանին հարցեր են ուղղել «Հայաստան» խմբակցությունից Արծվիկ Միսայանը, Գեղամ Նազարյանը, Աննա Գրիգորյանը, Արթուր Խաչատրյանը, «Պատիվ ունենալ» խմբակցությունից՝ Թագուհի Թովմասյանը և Տիգրան Աբրահամյանը:

Իսկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները՝ Վահագն Ալեքսանյանը, Սարգիս Խանդանյանը, Մարիա Կարապետյանը, Թագուհի Ղազարյանը, Վարդիմիր Վարդանյանը հարցեր են ուղղել ընդդիմադիր պատգամավոր Արթուր Խաչատրյանին, որը քննարկման ժամանակ որպես հիմնական զեկուցող էր հանդես գալիս:

Շուրջ 2 տարի անց ԲԳ պատգամավոր Հայկ Սարգսյանի ընտանիքին պատկանող խանութի տարածքում պայթյուն իրականացրած ենթադրյալ հանցագործին բացահայտել են, բայց գտնվելու վայրը չգիտեն ու հետախուզում են հայտարարել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է, թե ով է հետախուզվողը, նա Երեւան քաղաքի բնակիչ Գարեգին Վ.Ն է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նրա անունը տվել են ԲԳ գրասենյակի, ԲԳ պատգամավոր Գագիկ Մելքոնյանի տանը պայթուցիկների գործով կալանավորվածները: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ԲԳ պատգամավոր Հայկ Սարգսյանի հայրը՝ Զարեհ Սարգսյանը, հայտնեց, որ իրեն կամ որդիներին չեն իրավիճակ հարցաքննության: Ըստ նրա՝ հետախուզվողին չեն ճանաչում, անգամ անվան ու ազգանվան առաջին տառն էլ իրենց ոչինչ չի ասում: Նշենք, որ քննչական կոմիտեն հայտնել էր, որ քննության ընթացքում ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է, որ Երեւան քաղաքի Նոյ թաղամասի 143/1 տան բակում պայթյունի իրականացմանը, ինչպես նաեւ Երեւան քաղաքի Գ. Գյուլբենկյան փողոցի 33-րդ շենքի եւ Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գրասենյակի մոտ պայթուցիկ սարքերի տեղադրման կազմակերպմանը, բացի վարույթով մեղադրյալ Գ. Ս.՝-ից եւ ինքնությունները դեռեւս չբացահայտված անձանցից, մասնակցել է նաեւ 42-ամյա Գ. Վ.Ն:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Երեկ Հակակոռուպցիոն դատարանում ուշագրավ իրավիճակ էր: Ինչպես հայտնի է, ՀՀ նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը դատարան է գալիս իր հարազատների օգնությամբ: Նա առողջական խնդիրների պատճառով դժվարությամբ է քայլում: Արդյունքում՝ նրան օգնելով բերեցին դատարան, ու նա սպասում էր, թե իրեն որ դահլիճ կկանչեն՝ ներկայանալու. սակայն կարգադրիչները նրան հայտնեցին, որ Նիստը չի կայանալու, քանի որ դատավոր Սուրեն Խաչատրյանը դատերի է գնում. միզուցե ծանուցում են ուղարկել նախկին ոստիկանապետին ու չի հասել: Արդյունքում՝ Վլադիմիր Գասպարյանին այլ ելք չմնաց, քան ինչպես դժվարությամբ ներկայացել էր, այնպես էլ հեռանար դատարանից: Մի դեպքում դատավորները դասի են, մյուս դեպքում բենզին չկա կամ ուղեկցող ոստիկաններ՝ կալանավորներին դատարան բերելու համար, մյուս դեպքում վկաներին չեն կարողանում բերման ենթարկել. սիսայսպիսին է իրավիճակը դատարաններում:



2018 թվականից հետո արդեն կոռուպցիոն հնարամտություններով հայտնի իշխանությունը կարծես կարգախոս է որդեգրել՝ ունենալ հնարավորինս շատ ՊՈԱԿ-ներ՝ Պետական ոչ առետարային կազմակերպություններ: Բանն այն է, որ հեղափոխությունից հետո ՊՈԱԿ-ների շարան ստեղծած իշխանությունը չի հապաղել և 2021 թվականին շրջակա միջավայրի նախարարության ենթակայության տակ մի ՊՈԱԿ է հիմնել: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը հիմնվել է Ռոմանոս Պետրոսյանի նախարարության օրոք: Այն ժամանակ նախկին նախարարի օրոք ասվում էր. «Այն, ինչ այսօր կա, չի բավարարում տնտեսվարողների արդի պահանջներին և բնապահպանությամբ իրապես մտահոգ շրջանակներն: ՊՈԱԿ-ը պետք է դառնա լիովին նոր կառույց՝ նոր ու հզոր կարողություններով օժտված»: Գուցե դարձել է նոր ու հզոր կարողություններով օժտված կառույց, սակայն հարց է, թե ո՞վ է տեղյակ այս կառույցի մասին: 2024 թվականի հունվարի 18-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը դրամաշնորհ է ստացել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից, որը կազմել է 250 մլն 950 հազար դրամ: ՊՈԱԿ-ի դեկավարը հաջիկ Մարտիրոսյանն է: Կառույցի նպատակը, ըստ պայմանագրի, սահմանված է՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն, եւ փորձաքննական եզրակացության նախագիծը ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարի հաստատմանը: Մարտիրոսյանը, Կաղաստրի կոմիտեի նախկին ղեկավար Սարհատ Պետրոսյանի հրամանով, 2018 թվականին Կոմիտեի «Արմավյան» սպասարկման գրասենյակի պետ է նշանակվել: Աշխատանքային գործունեությունն սկսել է անշարժ գույքի՝ կաղաստրի համակարգում 2007 թվականից: Աշխատել է Կոմիտեի կաղաստրային գնահատման, այնուհետեւ վերահսկողության բաժնում: Երեւանում, ծառերի սպանդին գուզահեռ, ոչ մի անգամ այս կառույցը չդրսևորեց իր գոյության արդարացումը: Սեկ անգամ ՀՀ բնապահպանական խնդիրների վերաբերյալ փորձաքննություն եւ փորձաքննական եզրակացություն չներկայացրեց:



ԶՐՈՒՅՑ

«ԳԵՏՆԻ ՎՐԱ ՌՈՒՄԱՍՏԱՆԵՆ Է ՄԵՐ ԴԱՇՆԱԿԻՑԸ»

Ադրիի 5-ին Բյուսեյում կայացած հանդիպման եւ արդեջանական վերջին սադրանքների վերաբերյալ ArmLur.am-ը գրուցել է ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Մեյրան Օհանյանի հետ:

«Պարոն Օհանյան, արիի 5-ին Բյուսեյում կայացած հանդիպումից հետո՝ մինչ օրս, Ադրբեջանը ամենօրյա ռեժիմով սադրանքների է դիմում մեր սահմանի ուղղությամբ՝ Տավուշի, Փեղարքունիքի, Սյունիքի հատվածներում. ինչո՞ւ այս հանդիպման արդյունքում չհաջողվեց զսպել Ադրբեջանի քայլերը:

«Այս հանդիպման ընթացքում Ադրբեջանը ցույց է տվել, որ առաջին՝ ինքնուրույն խաղացող է տարածաշրջանում, եւ իր գործողությունները կապ չունեն այդ հանդիպումների հետ, դեռ ավելին՝ այս հանդիպումների ժամանակ իրենք հատուկ լարվածություն են ստեղծում, որպեսզի դրանց ժամանակ ի վնաս իրենց ինչ-որ որոշումներ չընդունվեն, երկրորդը, քանի որ այդ լարվածությունը, արձակված անկանոն կրակները նաեւ համատեղվում են ապատեղեկատվության հետ Ադրբեջանի կողմից՝ իբրեւ թե իրենք պատասխանում են հայկական կողմին, նշանակում է՝ լարվածության օղակը Հայաստանի Հանրապետության շուրջ սեղմած են ուզում են պահել, եւ սա պետք է Հայաստանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից լուրջ ուսումնասիրման առարկա լինի: Այսինքն՝ պետք է ուսումնասիրել ռազմաքաղաքական իրավիճակը, նրանց գործերի դասավորվածությունը, հնարավոր գործողությունների բնույթը, որպեսզի, կարողանանք հակադրվել վերջիններիս: Իսկ ինչ վերաբերում է Բյուսեյի հանդիպմանը, բոլորը իրենց շահերն ունեն Հայաստանի Հանրապետությունում եւ Հարավային Կովկասում, եւ բոլորը գործում են՝ իրենց շահերից բխող քայլերով: Օգնությունները, որոնք տրվում են տնտեսության զարգացման համար, առաջին անգամ չէ, որ Հայաստանի Հանրապետությունը ստանում է ԱՄՆ-ից կամ Եվրամիությունից, դրանք կային 1994-1995 թվականներից սկսած եւ շարունակական են: Կարծում եմ՝ դրանց հիմնական նպատակը խաղաղությանը նախապատրաստելն է եւ ՀՀ իշխանությունների մոտ համապատասխան տրամադրություն ստեղծելը: Այսինքն, որպեսզի Ադրբեջանի հետ գնան խաղաղության, քանզի այդ համագործակցությունը Եվրամիությունը ավելի լայն սպեկտրով է տեսնում հատկապես Էներգետիկայի եւ Ադրբեջանի տարածքում ունեցած տնտեսական հնարավորությունների շրջանակում: Ընդհանուր առմամբ, ՀՀ իշխանությունները շատ են



խոսում այս կամ այն գործընթացի դիվերսիֆիկացիայի մասին՝ եւ անվտանգության, եւ արտաքին հարաբերությունների առումով. սակայն, դիվերսիֆիկացիա չի նշանակում մեկ ամբողջության կազմաքանդում եւ կամ անվտանգության մեկ ուղղությունը մի կողմ դնել՝ անցնելու մյուս կողմ. այն նշանակում է, որ ունեցած անվտանգային, արտաքին հարաբերությունների բնագավառում պետությունը ռազմավարական գործընկերոջ հետ համագործակցության լավագույն պայմաններում նաեւ այլ հնարավորություններ փորձի ստեղծել այն ուժային կենտրոններում, որոնք մեր շահերից են բխում:

«Պարոն Օհանյան, իշխանությունները նաեւ հայտարարություններ են անում, թե վերջին օրերի սահմանային լարվածությունից տպավորություն է, որ Ադրբեջանը միայնակ չի գործում, եւ համագործակցում է նաեւ ռուսական կողմի հետ. այսինքն՝ ակնարկում են, որ Ադրբեջանին ռուսական կողմն է լարում: Դուք ի՞նչ դիտարկում ունեք, արդյո՞ք սա է դիվերսիֆիկացիայի այն գիւղը, որ Հայաստանը վճարում է:

«Դիվերսիֆիկացիա ասելով՝ մենք այսօր տեսնում ենք, որ ՀՀ իշխանությունները փորձում են վեկտորի փոփոխություն իրականացնել, որը մեր տարածաշրջանում անվտանգային խնդիրների առումով անընդունելի է եւ իրատեսական չէ: Եվրոպայից մեզ օգնություն չի եղել, եւ ոչ էլ կլինի՝ չնայած Եվրոպայի հետ ունենք գործընկերային հարաբերություններ. գետնի վրա մեր ռազմավարական գործընկերը Ռուսաստանի Դաշնությունն է, մենք սա ասում ենք ելնելով եւ աշխարհագրական դասավորվածությունից, եւ պատմամշակութային մեր անցյալից, եւ տնտեսության ու անվտանգության զարգացման մեր լավագույն փորձից. եթե այդ հարաբերությունները հիմա վատ վիճակում են, ապա նշանակում է, որ ՀՀ իշխանությունները պետք է մտածեն այս ուղղությամբ, որովհետեւ հարաբերությունները հենց այնպես չեն ձեւավորվում, դրանց անցած ճանապարհում քրտնաջան աշխատանք է թաքցված: Այսինքն, եթե տվյալ հարաբերությունները ի շահ Հայաստանի են, ապա այդ հարաբերությունների խնդիրներից ոչ թե պետք է խոսափել, այլ հանդիպակաց մարտ հայտարարել, ասինքն՝ գնալ եւ փորձել լուծել դրանք, որովհետեւ լուծումներն ի նպաստ Հայաստանի Հանրապետության են:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԿՐԿԻՆ ՄՐՎԱԾ

Դատելով ՔՊ փոխնախագահ, ԱԺ պատգամավոր Վահագն Ալեքսանյանի ելույթներից՝ նա կարծես մտադիր է հասնել առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի պաշտոնակալությանը:

Պատգամավորն ԱԺ նիստերում հետեւողականորեն «հարձակումներ» է գործում Անահիտ Ավանեսյանի դեմ՝ քննադատելով նախարարության ենթակայության տակ գտնվող բուժկենտրոնների գործունեությունը:

Հերթական դեպքն այսօր էր, երբ Ալեքսանյանը կրկին հայտարարեց, թե դիմել է բուժկենտրոնների ղեկավարների պարզեւավճարների մասին տեղեկատվություն ստանալու համար, բայց այդպես էլ պատասխան չի ստացել, ոչ էլ իրեն պատասխանել են բժիշկների աշխատանքային ժամերի հետ կապված: Եւ նա, մեղադրական ու հանդիմանական տոնով դիմելով Անահիտ Ավանեսյանին, հիշեցրել է, որ պատգամավորները բյուջե են հաստատում եւ այդ բյուջեից նաեւ բուժօգնություններն են գումարներ տալիս:

Թե ինչու է Վահագն Ալեքսանյանը սեւեռվել Անահիտ Ավանեսյանի ու նրա գլխավորած գերատեսչության վրա, անհասկանալի է, սակայն փաստ է, որ տեսական ժամանակ իշխող ուժի փոխնախագահը անհարմար դրության մեջ է դնում նախարարին. պատճառների մասին մտում է միայն ենթադրել: Եվ որքան էլ Ավանեսյանը ձեռնարկի, թե որտեղ է խնդիր չկա, որ աշխատանքային քննարկումներ են, ԱԺ-ում նա իր պատասխանով պատգամավորին «տեղը դրեց»՝ բացատրելով, որ պարտադիր չէ, որ բարձր մակարդակի պետական գաղտնիքին հասանելիության թույլտվություն ունեցող անձը նաեւ մարդու անձնական կյանքի մանրամասներին, առողջական գաղտնիքին հասանելի լինի:

Սա, թերեւս, այն դեպքերից է, երբ պատգամավորին իրոք չէր խանգարի մի փոքր իրավաբանություն ուսումնասիրել:

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՉ

Շվեդիայի խորհրդարանի պատգամավոր Էրիկ Յելսթրոմը կոչ է անում աշխարհին շարունակել հետեւել Հարավային Կովկասում զարգացող իրադարձություններին եւ աջակցելով Հայաստանին՝ վստահ լինել, որ ոչ ոք չի հանդուրժի ու թույլ չի տա Ադրբեջանին սրել իրավիճակը տարածաշրջանում:

Այս մասին շվեդ պատգամավորը գրառում է կատարել ֆեյսբուքյան իր էջում:

«Հանգստյան օրերին արդեջանական գինվորականները կրկին մի քանի անգամ գնդակոծել են հայկական սահմանային դիրքերը: Այս վարքագիծը կարծես խառնուրդ է այն բանի, որ կռվարարը ցանկանում է ցույց տալ իր ուժն ու ռազմավարությունը պատասխան հրահրելու համար, որն այնուհետեւ կարող է օգտագործվել որպես արդարացում՝ ավելի մեծ բռնության: Որքան էլ դա դատապարտելի թվա, ես հիմա մեծ թեթեւություն եմ գզում, որ իրավիճակը չի վատացել: Երեքշաբթի օրը խորհրդարանի մի քանի գործընկերների հետ քննարկելով իրադարձությունների զարգացումը՝ ես նրանց ասացի, որ վախենում եմ, որ Ադրբեջանը երեք օրվա ընթացքում կհատի սահմանները: Դա տեղի չունեցավ... դեռեւս: Արտաքին աշխարհը պետք է շարունակի հետեւել Հարավային Կովկասին, աջակցի Հայաստանին եւ համոզվի, որ Ադրբեջանի կողմից էսկալացիան չի հանդուրժվի», - գրել է Յելսթրոմը:

10 ՄԼՆ ԾԱՌ ՉՏՆԿԿԵՑ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է. ՄԱՍ 196

2019 թվականի հոկտեմբերի 16-ին «Գործալ ինովացիոն ֆորում-2019»-ի բացմանը Նիկոլ Փաշինյանը հրադարձական խոսուցացավ. «Մեր կառավարությունը մի աս ամբիցիոզ ծրագիր է մշակել, որը դեռ է իր գագաթնակետին հասնի 2020թ. հոկտեմբերի 10-ին, եւ այդ օրը մենք ողանավորում ենք Հայաստանի Հանրապետությունում ճնկել 10 մլն ծառ, 10-րդ ամսի 10-րդ օրը, որը կառուցվածի 10 մլն հայության միասնությունը Հայաստանի ղեկավարության, Հայաստանի

Հանրապետության օուրջ եւ Հայաստանի Հանրապետությունում»:

Իրականում, սակայն, Հայաստանում 2020թ. հոկտեմբերի 1-ին չսնկվեց ոչ մի ծառ. պատճառը, իհարկե, քովիդն ու պատերազմն էին: «Ժողովուրդ» օրաթերթը չկարողացավ պարզել, թե ուր են 10 մլն տնկիները, որ պետք է տնկվեին եւ ինչու չսնկվեցին դրանից հետո գոնե: Խոստումը չկատարելուց ավելի քան 3 տարի անց՝ 15.01.2024թ., շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիոյանի

իրավիքած մամուլի ասուլիսի ժամանակ լրագրողները հիշեցրին խոստումը: «2020 թվականին նախատեսված միջոցառումը չկատարվեց հայտնի իրադարձությունների արդյունքում՝ առաջին հերթին քովիդը, հետո՝ պատերազմը: Մենք չենք վերադարձել ծրագրի իրականացմանը, բայց 2024 թվականին 3 մլն ծառ կտնկենք», - ասաց նա: Նախարարը, սակայն, նշեց, որ տնկվող ծառերի կաչողականության մակարդակը չի բավարարում:

ԷՄՍՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՓԱՏՏԱՀԱՎԱՔ ԱՃԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը ապրիլի 9-ին ընդունել է Եվրոպայի խորհրդի քաղաքական ու արտաքին հարաբերությունների հարցերով տնօրեն Միրոսլավ Պասպալին:

Հանդիպմանը մասնակցել են նաև Երեւանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեն եւ Եվրոպայի խորհրդում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Արման Խաչատրյանը:

Ողջունելով հյուրերին՝ Անահիտ Մանասյանը ներկայացրել է պաշտպանի գործունեության ուղղությունները ընդգծելով կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի շրջանակներում եւ մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները:

Պաշտպանը ներկայացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցեր, հատուկ անդրադարձել անձամբ իր եւ աշխատակազմի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքներին: Այս համատեքստում Անահիտ Մանասյանը նշել է, որ առաջին իսկ օրվանից ակտիվ ներգրավվել է այդ աշխատանքներում. աշխատակազմի հետ այցելել է Գորիս, Կոռնիձոր եւ Վայք՝ աշխատանքներն իրականացնելով նաև գիշերային ժամերին:

Փաստագրված տեղեկություններն ամփոփվել են Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում, որն իսկությունն ապացուցող խորհրդապահական հատվածով Պաշտպանի կողմից ներկայացվել է մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կազմակերպություններին եւ դերակատարներին: Անահիտ Մանասյանն անդրադարձել է նաև Ադրբեյջանի կողմից վարվող հայատյացության քաղաքականությանը, ՀՀ սահմանամերձ բնակավայրերի բնակիչների իրավունքների պաշտպանությանը:

Քննարկվել են նաև ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի շրջանակներում իրականացվող աշխատանքները:

Հանդիպման ավարտին կողմերը մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համագործակցությունը շարունակելու եւ առավել զարգացնելու պատրաստակամություն են հայտնել:

Ապրիլի 9-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը ընդունել է Ֆրանսիայի Բուս-Պյու-Ռոն դեպարտամենտի և Էս-Մարսել-Պրովանս մեքսոպոլի նախագահ Մարսին Վասալի գլխավորած դեսպլիբացիային:

ՀՀ ԱԳ նախարարի պաշտպանության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից հայտնում են, որ նախարար Միրզոյանն ընդգծել է, որ Հայաստանի եւ Ֆրանսիայի հարաբերությունները, որոնք իրենց բովանդակությամբ ընդունված է բնութագրել որպես առանձնաշնորհյալ, այսօր զարգանում են լայն օրակարգով եւ նոր ուղղություններով, որոնք միտված են ամրապնդելու ՀՀ դիմակայությունը: Վերջինիս համատեքստում երկուստեք ընդգծվել է հատկապես տնտեսական ոլորտում եւ գործարար կապերի ընդլայնման միջոցով փոխգործակցության առավել ակտիվացման կարելիությունը:

Ջրուցակիցներն անդրադարձել են նաև ապակենտրոնացված համագործակցության հնարավորություններին, որոնց համար լավ հիմքեր են ձեւավորվել, որոնցից է Բուշ-Պյու-Ռոն դեպարտամենտի մասնակցությունը Հայաստանի մարզերում առողջապահական ծրագրերին:

Հանդիպմանը քննարկվել են ՀՀ-ԵՄ գործընկերության օրակարգին առնչվող հարցեր: Նախարար Միրզոյանն ընդգծել է, որ Հայաստանը, ունենալով ժողովրդավարական բարեփոխումների օրակարգ, էականորեն խորացնում է հարաբերու-



թյունները Եվրոպական միության եւ անդամ պետությունների հետ:

Անդրադարձ է կատարվել Հարավային Կովկասում անվտանգային իրավիճակին եւ առկա մարտահրավերներին: Նախարար Միրզոյանն ընդգծել է 2022թ. հոկտեմբերին Ֆրանսիայի նախագահի մասնակցությամբ Պրահայում կայացած քառակողմ հանդիպման արդյունքներով ընդունված հայտարարության տեքստում Ալմաթիի հռչակագրի հիշատակման եւ Հայաստանի ու Ադրբեյջանի տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչ-

ման վերահաստատման կարելիությունը: Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը ներկայացրել է Հայաստանի եւ Ադրբեյջանի միջեւ վերջին շրջանի քննարկումները եւ գործընթացում պահպանվող հիմնական հարցերը:

Անդրադարձ է կատարվել նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի իրավունքների եւ կարիքների հասցեագրմանը, այս նպատակով ՀՀ-ին ցուցաբերված աջակցությանը, ինչպես նաև հումանիտար բնույթի հարցերի:

ՍՈՒՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐԿՎ ԽՃԱՆԿՈՒ

ՀԵՌԱՄՈՍԱԶՐՈՒՅՑ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց է ունեցել Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի հետ: Այս մասին հաղորդում է կառավարության մամուլի ծառայությունը:

«Քննարկվել են Հայաստան-Գերմանիա համագործակցությանը, ՀՀ-ԵՄ հարաբերությունների հետագա զարգացմանը վերաբերող հարցեր:

Անդրադարձ է կատարվել Հայաստան-Ադրբեյջան խաղաղության գործընթացին: Վարչապետ Փաշինյանը նշել է, որ Հայաստանը պատրաստ է գնալ լուծումների 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պրահայում, 2023 թվականի մայիսի 14-ին եւ հուլիսի 15-ին Բրյուսելում, ինչպես նաև 2023 թվականի հոկտեմբերի 5-ին Գրանադայում համաձայնեցված սկզբունքների հիման վրա: Նիկոլ Փաշինյանն անընդունելի է համարել այդ սկզբունքներն ադալադելու ցանկացած փորձ:

Վարչապետ Փաշինյանը կանցլեր Շոլցին շնորհակալություն է հայտնել Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումներին, Հայաստան-Գերմանիա, Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացմանն աջակցելու համար»,- ասվում է պաշտոնական հաղորդագրությունում:

ՎԵՐՋՆԱԿԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ԶԿԱ

Սահմանազատումը Տավուշի մարզից սկսելու վերաբերյալ հարցերը դեռ քննարկման փուլում են, վերջնական որոշում դեռ չկա: Այս մասին խորհրդարանում լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ փոխվարչապետ, սահմանազմման եւ սահմանազատման հանձնաժողովի նախագահ Սիեր Գրիգորյանը՝ պատասխանելով լրագրողների հարցերին՝ արդյոք

Տավուշի մարզից է սկսվելու սահմանազատման գործընթացը:

Լրագրողներից մեկի դիտարկմանը՝ արդյոք Ադրբեյջանը դեմ է սահմանազատման հիմքում դրվելիք Ալմաթիի հռչակագրի հոլանդ, փոխվարչապետը հորդորեց հետևել պաշտոնական հայտարարություններին:

Գրիգորյանի խոսքով՝ սահմանազատման հատվածները, կարելի է սկզբունքները՝ անվտանգություն, սոցիալ-կենցաղային, իրավական հարցեր, մինչև վերջնական որոշումներ չլինեն բանակցություններ սկսելու մասին չի կարող նշել:

Հարցին՝ ինչ տարածք է պատրաստ վերադարձնել Ադրբեյջանը, Սիեր Գրիգորյանը պատասխանեց՝ չի կարող հարցին պատասխանել, քանի որ վերջնական կոնսենսուս դեռևս չկա:

Դիտարկմանը ի պատասխան՝ արդյոք նույնիսկ սահմանազատումը Տավուշից սկսելու վերաբերյալ չկա՞ կոնսենսուս, փոխվարչապետը նշեց՝ սահմանազատումը այդ հատվածից սկսելու մասին որոշում հնարավոր է լինի, եթե մնացած սկզբունքային հարցերի շուրջ՝ անվտանգային, սոցիալ-կենցաղային եւ իրավական, կոնսենսուս ձեռք բերվի:

«Այս փուլում քննարկում ենք այդ հարցերը: Իհարկե, բազմաթիվ հարցեր կան, որոնց շուրջ ընկալումները նույնատիպ են»,- ասաց Գրիգորյանը՝ նշելով, որ դեռևս կան հարցեր, որոնց հետ կապված չկա կոնսենսուս:

ՓԱԹԵԹ՝ 2.8 ՄԼՆ

ԵՎՐՈ ԲՅՈՒՋԵՈՎ

Եվրոպայի խորհուրդն ապրիլի 11-ին կներկայացնի Հայաստանի փախստականների ներհոսքին արձագանքելու Եվրոպայի խորհրդի միջոցառումների համա-

լիր փաթեթը, որի ընդհանուր բյուջեն կազմում է 2.8 միլիոն Եվրո:

Այս մասին տեղեկանում ենք Հայաստանի Հանրապետությունում Եվրոպայի խորհրդի գրասենյակի տարածած հաղորդագրությունից:

Գործողությունների փաթեթը կազմվել է Եվրոպայի խորհրդի Միգրացիայի եւ փախստականների հարցերով Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ՝ 2023 թվականի հոկտեմբերի 11-13-ին Հայաստան այցի արդյունքների հիման վրա, որի ընթացքում Հայաստանի իշխանությունների հետ համատեղ սահմանվել են Հայաստանի համար աջակցության կոնկրետ ոլորտներ՝ Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրին (2023-2026թթ.) եւ Միգրացիայի եւ ապաստանի համատեքստում խոցելի անձանց պաշտպանության գործողությունների ծրագրին (2021-2025թթ.) համահունչ:

Արձագանքման փաթեթի շրջանակներում, որը Հայաստանի համար Եվրոպայի խորհրդի Գործողությունների ծրագրի (2023-2026թթ.) անբաժանելի մասն է, Եվրոպայի խորհուրդը նշում է՝ 2023 թվականին Հայաստան բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությունը, հատկապես խոցելի խմբերում ընդգրկված փախստական երեխաների եւ կանանց իրավունքների պաշտպանությունը, փախստականներին ընդունած համայնքներին, մարդու իրավունքների պաշտպանության հաստատություններին աջակցություն, Հայաստանի առողջապահության համակարգում Ղարաբաղից բուժաշխատողների լիարժեք ինտեգրում, ինչպես նաև հոգեբանական աջակցության տրամադրում:

Արձագանքման փաթեթի շրջանակներում Եվրոպայի խորհուրդը նախաձեռնել է չորս նոր ծրագիր եւ լրացուցիչ բաղադրիչներ է ներառել երկու ընթացիկ ծրագրում:

ԹՈՂԵԼ Է ԱՂԻՐԵԶԱՆՑԻՆԵՐԻՆ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ԴԱՏԱՎՈՐԸ

ArmLur.am-ը դարբերաբար հանրությանն է ներկայացնում դատական-իր, դատական իշխանության ներկայացուցիչների գույքի ու եկամուտների հայտարարագրերը:

Այս անգամ ներկայացնում ենք «օրենքով գող» Արմեն Ղազարյանի՝ «ՊՊՈՂ» գործը քննող դատավոր Վահե Զիվանյանի՝ 2021 թվականի վերաբերյալ հայտարարագիրը:

ArmLur.am-ը պարզեց, որ նա ծնվել է Արցախի Մարտունու շրջանի Թաղավար գյուղում: Դատավորի՝ 2021 թվականի հայտարարագրում նշված է, որ Արցախում նա ունեցել է 8 հողամաս եւ 1 առանձնատուն եւ, փաստորեն, անշարժ գույքը թողել է Աղբրեջանցիներին:

Բացի այս, նշենք, որ 2021թվականի վերջին ունեցած փոխառության գումարը կազմել է 34 միլիոն 928 հազար դրամ:

Մեզ հայտնի դարձավ նաեւ, որ դատավորը հայտարարագրել է 1995 թվականի արտադրության «Մերսեդես» մակնիշի մեկ ավտոմեքենա, որը նա գնել է 2015 թվականին:

Ըստ դատավորի ներկայացրած հայտարարագրի՝ 2021 թվականի վերջին դրամական միջոցները կազմել են 75 հազար 240 դրամ:

Ի դեպ, 2021 թվականին, երբ Զիվանյանն աշխատել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում, ամսական ստացել է ավելի քան 790.000 դրամ աշխատավարձ:

Բացի այդ, դատավոր Զիվանյանը 33 պետական եկամուտների կոմիտեից ստացել է 1 միլիոն 841.000 դրամ, որն էլ հայտարարագրել է որպես եկամուտ: Զիվանյանը 2021 թվականի տարեվերջին 2 միլիոն դրամի չափով կանխիկ գումար է ունեցել:

Հավելենք, որ դատավորը 12.08.2009-01.03.2014թթ. աշխատել է Արցախի հանրապետության ոստիկանության քննչական վարչությունում՝ Ստեփանակերտ քաղաքի քննչական բաժնի քննիչի, նույն վարչության հատկապես կարելու գործերով քննության բաժնի քննիչի, ավագ քննիչի եւ Մարտունու շրջանի քննչական խմբի ավագ քննիչի պաշտոններում, ունի ոստիկանության կապիտանի կոչում:

05.03.2014-29.12.2015թթ. աշխատել է 33 զինվորական դատախազության 2-րդ կայազորի զինվորական դատախազության դատախազի, այնուհետեւ ավագ դատախազի պաշտոններում:

29.12.2015-19.06.2018թթ. զբաղեցրել է Ա3 գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցա-



գործունեությունների գործերով բաժնի դատախազի պաշտոնը:

19.06.2018-17.09.2019թթ. զբաղեցրել է Ա3 դատախազության Մարտակերտի շրջանի դատախազի տեղակալի պաշտոնը, ունի արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան: Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի հունիսի 18-ի ԲԴԽ-37-Ո-84 որոշմամբ ներկայացված առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության նախագահի 2020թ. հունիսի 24-ի թիվ ՆՅ-131-Ա հրամանագրով նշանակվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, իսկ այժմ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր է:

ArmLur.am-ին «օրենքով գող» Արմեն Ղազարյանի՝ «ՊՊՈՂ» գործը մակագրվել է դատավոր Վահե Զիվանյանին: Վերջինս այն դատավորն էր, որ 2022 թվականին միացել էր 93 դատավորների ստորագրահավաքին եւ, մտահոգված լինելով դատավորների նկատմամբ իրենց գործունեության հետ կապված իրականացվող հետապնդումներով, պահանջում էր դատավորների ժողով հրավիրել:

Դատախազը 2024 թվականի մարտի 26-ին հաստատել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա.Ղ.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունն ու վարույթի նյութերի հետ հանձնել դատարան: Այս մասին տեղեկացնում են ՀՀ գլխավոր դատախազությունից:

«Հիշեցնենք, որ 2022 թվականի մարտի 21-ին դատախազը հանրային քրեական հետապնդում էր հարուցել Ա.Ղ.-ի նկատմամբ այն բանի համար, որ նա, ունենալով քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, պահպանել է այն (Քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մաս):

Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռուստով քաղաքում, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձանց ներկայությամբ «թագադրվելով» ստացել է «օրենքով գողի»՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ եւ 2022 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ շարունակել է պահպանել օրենքով չթույլատրվող այդ կարգավիճակը:

«Ա.Ղ.-ի նկատմամբ կիրառվել են համակցված խափանման միջոցներ՝ բացակայելու արգելք եւ 20 մլն դրամի չափով գրավ»,- ասված է հաղորդագրության մեջ: Գլխավոր դատախազությունը, սակայն չի գաղտնագրեց, թե ով է այդ «օրենքով գողը»:

ArmLur.am-ը սակայն պարզեց՝ ում մասին է խոսքը. նա Արմեն Ղազարյանն է, ով առավել հայտնի է «ՊՊՈՂ» կեղծանունով: Նշենք, որ 2022 թվականին ArmLur.am-ը գրել էր, որ Երեւանում Մուրացան 109 հասցեից ոստիկանության էրեբունու բաժնի բերման են ենթարկվել մեկ տասնյակից ավելի անձինք:

Բերման ենթարկվածների թվում են եղել «օրենքով գող» ՊՊՈՂ՝ Արմեն Ղազարյանը, այլ անձինք եւս, որոնցից մեկը հայտնի է որպես «Կաբելի տղա», որը շուտով պետք է դառնար «օրենքով գող»:

Նա մեղադրվում էր հավաք կազմակերպելու մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՏՈՆՈՅԱՆԻՆ ԿՔՆԵՆ ԸՐԹԻՌՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ դատարանում քննությունը հասել է հրթիռների ստուգման, զննման գործընթացին, եւ նիստը հակակորուպցիոն դատարանից տեղափոխվել է «Էրեբունի» օրանակալայն ու կայանում է այնտեղ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրթիռները տեղափոխված են այնտեղ:

Նշենք, որ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, որն անցնում է ՊՆ-ին անախտան հրթիռներ տրամադրելու գործով, շարունակում է մնալ կալանքի տակ: Դատարանները մերժում են նրա խափանման միջոցը փոխելու եւ ազատ արձակելու բոլոր միջնորդությունները:

2021 թ. սեպտեմբերի 30-ից Տոնոյանը կալանավորված է, եւ գործով կալանքի տակ գտնվող ՋՈՒ գլխավոր շտաբի պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, ՋՈՒ վարչության պետ Ավետիք Մուրադյանն ազատ են արձակվել:

Այս գործով մեղադրանք է առաջադրվել նաեւ ԳՇ պետ Արտակ Դավթյանին:

Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն հաղորդագրություն էր տարածել, որով Դավիթ Տոնոյանը մեղադրվում է առանձնապես խոշոր չափերով՝ 2 մլրդ 277 մլն 323 հազ. 840 դրամ գումար հափշտակելու, կեղծիքներ, հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու համար:

ԳԻՐՔԸ՝ ԱՌԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՀՀ ՊՆ N զորամասի հրաձգային գումարտակի վաշտի ավագ, պայմանագրային զինծառայող Վ.Գ.-ն եւ ջոկի հրամանատար Ն.Ս.-ն, Գեղարքունիքի մարզի մարտական դիրքերում ընդգրկված լինելով գործառնապահության հերթապահությանը, խախտել են մարտական հերթապահություն կրելու կանոնները, չեն դիմակայել Աղբրեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ 2022 թվականի սեպտեմբերի 13-ից իրականացված հարձակմանը:

Մասնավորապես՝ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին՝ առանց ավագ պետի թույլտվության, ենթակա անձնակազմին կարգադրել են թողնել մարտական դիրքերը: Վ.Գ.-ն եւ Ն.Ս.-ն, առանց մարտ վարելու, ենթակա անձնակազմի հետ չկազմակերպված ձեռն լքել են մարտական դիրքերը, ինչը հանգեցրել է մարտական հերթապահության կրման բնականոն ընթացքի խաթարմանը՝ ռազմական գործողությունների ընթացքում մարտական դիրքերը մնացել են առանց պաշտպանության:

Նույն օրը նշված անձնակազմի փոխարեն վերոնշյալ դիրքերում մարտական հերթապահության իրականացմանը ներգրավվել են նոր ուժեր. նույն զորամասի այլ ստորաբաժանման զինծառայողները տեղակայվել են մարտական դիրքերում եւ պաշտպանություն իրականացրել:

Դատախազը 2023 թվականի դեկտեմբեր 20-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Վ.Գ.-ի եւ Ն.Ս.-ի նկատմամբ՝ քրեական օրենսգրքի 540-րդ հոդվածի 6-րդ մասով (մարտի պարագաներում մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը):

Դատախազը 2024 թվականի ապրիլի 9-ին հաստատել է Վ.Գ.-ի եւ Ն.Ս.-ի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել իրավասու դատարան:

Ք. ՄԱՆՈՒՅԱՆ

ՊԱՏԱՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԻՑ ՑԱԾ Է ԸՆԿԵԼ

ArmLur.am-ին հայցնի դարձավ, որ դատախազության հիվանդանոցի դատախազներից մեկն իրեն 2-րդ հարկի դատախազից ցած է նետել, սակայն բարեխաղաքար նրան տեղափոխել են հիվանդանոց ու հասցրել փրկել կյանքը:

Ի պատասխան մեր տեղեկությունների՝ քրեակատարողական ծառայության

լրատվականից հայտնեցին. «Հայաստանի Հանրապետության ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձի՝ իրեն 2-րդ հարկի պատշգամբից ցած նետվելու լուրը չի համապատասխանում իրականությանը:

Ապրիլի 2-ին «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական

հիմնարկի կալանավորված անձանցից մեկը աստիճանավանդակից ցած է ընկել:

Բժշկի կողմից կալանավորված անձին ցուցաբերվել է առաջին օգնություն, միեւնույն ժամանակ կանչվել է շտապօգնություն, որը նրան տեղափոխել է քաղաքացիական հիվանդանոց:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒՅԱՆԻ

● Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների՝ ապրիլի 8-ից 9-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 104 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԼՈՒՄԱԶՈՐՑԻՆ ԱՐՁԻ ԶՈՐ Է ԳԱՐՉԵԼ

Մի քանի օր առաջ՝ ապրիլի 6-ին, Իջեան համայնքի Լուսաձոր գյուղում հողարկավորել են գյուղի բնակիչ, 1990թ.-ին ծնված տղամարդուն: Նախկինում զինվորական ծառայության մեջ եղած, զորացրվելուց հետո շինարարությամբ, գյուղատնտեսությամբ զբաղվող լուսաձորցի ապրիլի 4-ին համագյուղացիների հետ գնացել է Իջեան համայնքի Աճարկուտ գյուղի անտառ՝ սինդրիկ հավաքելու: Առավոտյան սինդրիկ քաղողներն անտառում բաժանվել են, սակայն երեկոյան լուսաձորցին անտառի պայմանավորված տեղում չի ներկայացել: Համագյուղացիների որոնումներով հայտնաբերվել է նրա խոշտանգված մարմինը: Անտառապահներն ասում են, որ Աճարկուտի անտառում արջեր կան, նրանք անտառի այդ հատվածում արջ են տեսել՝ իր քրթոթների հետ: Արջի գոհ դարձած լուսաձորցին երկու անջափահաս երեխաների հայր էր:

ԳՊՐՈՑՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի «ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել էր, թե 2024թ. ապրիլի 1-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում ընդհանուր քանի՞ ուսուցիչ է աշխատում, նրանցից քանի՞սն են մասնակցել կամավոր ատեստավորմանը, ատեստավորման գործընթացում ի՞նչ արդյունքներ են ունեցել: Մարզպետարանից պատասխանել են. «Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում է 1575 ուսուցիչ, որից 170-ը հաղթահարել է կամավոր ատեստավորման անցողիկ շեմը»: Հայաստանի անկախացումից հետո աստիճանաբար նվազել են Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների եւ դրանց աշակերտների, ուսուցիչների թվերը: Տավուշի մարզպետարանից ստացված տվյալներով՝ 2006 թվականին մարզի հանրակրթական դպրոցների քանակը եղել է 72, ուսուցիչների թիվը՝ 2060: 2006-2024 թվականներին՝ 18 տարում, մարզի հանրակրթական դպրոցների թիվը կրճատվել է 6-ով, այժմ Տավուշում գործում է 76 հանրակրթական դպրոց, որտեղ աշխատում է 1575 ուսուցիչ: Այսինքն՝ վերջին 18 տարում մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների թիվը նվազել է 485-ով: Միայն այս՝ 2023-2024 ուսումնական տարում բարձրագույն կրթության դիպլոմ չունենալու պատճառով Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից ազատվել է 55 ուսուցիչ: Սիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր (Ն. Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ Նշանակված) Հայկ Ղալումյանը մեր հարցման պատասխանում չի հայտնել, թե Տավուշի մարզում ընդհանուր քանի՞ ուսուցիչ է մասնակցել կամավոր ատեստավորմանը: Մարզպետը այդ հարցին չի պատասխանել, որովհետեւ չի ցանկացել բացահայտել կամավոր ատեստավորման գործընթացի ծախսերը, դրա խայտառակ ցուցանիշները:

ՈՍԿԻՆ ՄԱՐԶԱՅԱՆ Տավուշ

ԿԱՍԵՑՄԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔ

ՄՊԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Պեճական վերահսկողություն իրականացնող դաճեցնիստ անձը տղանդանցներում սնուցումների դեմքում կուցե՞նա իրավական հիմք՝ կասեցնելու կամ դադարեցնելու սղանդանցային գործունեությունը, ինչպես նաեւ սահմանելու լիազորող նորմեր:

Ազգային ժողովի նիստում այս մասին ասաց ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տաթևիկ Սարգսյանը՝ ներկայացնելով «Անասնաբուժության մասին» օրենքում եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխությունների նախագիծը:

Նրա խոսքով՝ սպանդանոցներում վերահսկողության հետեւանքով խախտումներ հայտնաբերելիս տնտեսավարողի գործունեությունը հնարավոր կլինի կասեցնել, կամ եթե վեց ամիս գործունեություն չի իրականացրել, ապա դադարեցնել այն:

«Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կենդանիների առողջության եւ մարդկանց գոնոզային վարակներից պաշտպանության համալիրում անասնաբուժական վերահսկման ենթակա ապրանքներ ներմուծող եւ արտահանող, մթերատու կենդանիներ պահող, կենդանական ծագման հումքի եւ մթերքի, կենդանական ծագման կողմնակի արտադրանքի, կերատեսակների, անասնաբուժական դեղամիջոցների արտադրությամբ, վերամշակմամբ, պահպանմամբ, փոխադրմամբ, առեւտրով կամ իրացմամբ զբաղվող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք պարտավոր են անասնաբուժական ծառայության անհապաղ տեղեկացնել կենդանիների հանկարծակի եւ զանգվածային հիվանդացության կամ անկումների մասին: Միաժամանակ լիազոր մարմինն իրականացնում է կենդանիների հիվանդացության ու վարակիչ հիվանդություններից անկումների պատճառների վերլուծություն: Այս համատեքստում օրենքում կսահմանվեն «անասնագերեզմանոց» հասկացությունը եւ անասնագերեզմանոցներին ներկայացվող պահանջները լիազորող նորմը»,- ասաց Սարգսյանը:



Փոխնախարարը տեղեկացրեց, որ ըստ օպերատիվ վերլուծության եւ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՄԱՏՍ) տվյալների՝ կա ծառայություն մատուցող 62, ծառայություն մատուցող եւ սեփական կարիքների համար գործող 18 եւ սեփական կարիքների համար գործող 23 սպանդանոց:

Տաթևիկ Սարգսյանը տեղեկացրեց նաեւ, որ սպանդանոցային գործունեությունը կանոնակարգելու եւ դրան աջակցելու նպատակով էկոնոմիկայի նախարարությունը մի շարք ծրագրեր է իրականացնում: Նախարարությունում քննարկվում է

«Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է ԱԱՀ դաշտում գործող, սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողներին տրամադրել ֆերմերային տնտեսություններից գնված գյուղատնտեսական կենդանիների սպանդանոցային մորթից ստացված մսեղիքի իրացման համար հաշվարկված ԱԱՀ-ի 15 տոկոսի չափով վերադարձի մեխանիզմը:

«2018 թվականից մինչեւ 2024 թվականի փետրվարը սպանդանոցների 6 հայտ է գրանցվել, գումարը կազմել է շուրջ 165,4 մլն դրամ: Հեշտացվել է սպանդանոցների կառուցման գործընթացը»,- եզրակացրեց Սարգսյանը:

ԼՄՍԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ

ՄՏՈՒԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ ՄԿՍՎԵԼ

Հայաստանի սարածային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը սկսել է միջոցառման ճանապարհների երկայնքով զսնվող կառույցների եւ հողասարածքների գույքագրումը: Այս մասին ապրիլի 9-ին Ազգային ժողովի նիստում ասել է վարչության ղեկի ղեկավար Քրիստինե Գալեչյանը:

Աշխատանքները, ըստ նրա, սկսվել են Արմավիրի մարզում գտնվող տարածքներից: «Գույքագրման շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվելու կառույցների, Նշանների եւ կայանատեղերի բացահայտմանը, որոնք խոչընդոտում են երթեւեկությանը կամ պարզապես սահմանափակում են ճանապարհների տեսանելիությունը», - նշել է Գալեչյանը:

Ինչպես նշեց փոխնախարարը, ստուգման արդյունքներով վարչությունը կկայացնի համապատասխան որոշումներ, այդ թվում վերը նշված շենքերի հնարավոր ապամոնտաժման մասին: «Դժվարությունն այն է, որ ճանապարհների երկայնքով տարածքները չեն կարող վաճառվել կամ մշակվել առանց նախարարության հավանության. սակայն այս պահանջը



տարիների ընթացքում բազմիցս խախտվել է: Ներկայումս ապրիլի շինարարության փաստերի առնչությամբ ընթանում են դատավարություններ»,- պարզաբանեց կառավարության ներկայացուցիչը:

Բացի այդ, նա հավելել է, որ ճանապարհային գծանշումները կհամապատասխանեցվեն ԵԱՏՍ չափանիշներին: Այսինքն այն պետք է թարմացվի առնվազն տարին երկու անգամ: Այժմ, խոստովանեց պաշտոնյան, այն հաճախ գրեթե ամբողջությամբ ջնջվում է, նույնիսկ մինչեւ նրանք ժամանակ ունենան նոր ներկ կիրառելու համար:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 7 պատահար. 1 մարդ զոհվել է, 6-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԱՆՈՐԱԴԱՐՁ

ԳԻՄԵԼ ԵՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆԱԼՈՎ

Հարկային հսկողության շրջանակում բացահայտվել է, որ մի խումբ տնտեսավարողներ, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափանիշների բավարարման դեպքում հարկ վճարողների հայտերի հիման վրա ԱԱՀ-ի գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվում է պարզեցված ընթացակարգով (առանց ուսումնասիրությունների) և ժամկետներում, ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը կամ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ գումարը միասնական հաշվին մուտքագրելու նպատակով, ներկայացրել են դիմումներ՝ իրականում չունենալով պահանջվող գումարն ստանալու իրավունք:

Ինչպես պարզվում է ՊԵԿ տարածած հաղորդագրությունից, հաշվի առնելով, որ նկարագրված առերեսայն պարունակում է ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, այն է՝ խարդախությունը, ՊԵԿ-ը ենթադրյալ հանցանքի փաստերով հաղորդումներ է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտե՝ կատարվածի հանգամանքները բացահայտելու և մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով:

ՊԵԿ-ը հորդորում է հարկ վճարողներին ձեռնարկ մնալ նման վարքագիծ դրսևորելուց, հակառակ դեպքում բոլոր նման փաստերով հանցանքի մասին հաղորդումներ են ներկայացվելու իրավասու մարմիններին և հետևողականորեն նպաստելու, որ մեղավորները ենթարկվեն պատասխանատվության:

ԲՆԱԿԱՆ ԸՆԲԺԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2024թ. հունվար-փետրվար ամիսների կտրվածքով հիմնական ժողովրդագրական ցուցանիշներն ամփոփվել են շտապ եղանակով, և ստորև ներկայացվում են բնակչության բնական շարժի և ԱԷԿՏ համակարգով ստացված սահմանային գրանցումների վերաբերյալ նախնական տվյալները:

2024 թ. հունվար-փետրվարին կենսունակության գործակիցը՝ ծնվածների և մահացածների հարաբերակցությունը, կազմել է 111.5%, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրված 129.9%-ի համեմատ: ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները հունվար-փետրվար ամիսներին կազմել է հետևյալ պատկերը՝ ծնվածներ՝ 5 477 մարդ, մեռելածիններ՝ 68 մարդ, մահացածներ՝ 4 914 մարդ: ՀՀ պետական ատյաններով գրանցվել է ամուսնության 2 602 դեպք, ամուսնալուծության՝ 698 դեպք:

Մահացածների թվաքանակը 2023 թ. վաղվա հիմնական հունվար-փետրվար ամիսներին կազմել էր 4 551 մարդ, իսկ 2024 թվականի նույն ժամանակահատվածի համար 4 914 մարդ: Եթե համեմատենք ժամանակահատվածի տվյալները, կնկատենք, որ այս տարի մահացածների թիվը աճել է 363 մարդով:

ՀՀ-ում մահացության առաջնային պատճառներից մեկը արյան շրջանառության համակարգի հիվանդությունների պատճառով է գրանցվում, հաջորդ պատճառը նորագոյացություններն են, ապա շնչառական օրգանների հիվանդությունները և այլ հիվանդություններ:

ԼՄՍԱ ՄԻՔՍԵՆՅԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀԱՅ-ՂԱԶԱԽԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Երևանում կայացավ հայ-ղազախական գործարար համաժողովը, որի ընթացքում Բնակչության հարցերի և Պաշտպանության նախարարի միջև առեւտրահարկային հարաբերություններին, գրասեռ-ջության ու լոգիստիկայի զարգացմանը վերաբերող հարցեր:

ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի փոխնախագահ Կարեն Իվանովը բացման խոսքում նշեց, որ տվյալ համաժողովը կարելի է հարթակ է՝ դիտարկելու գործարար շրջանակների ու միջպետական տնտեսական հարաբերությունների հիմնական ու հեռանկարային բաղադրիչները:

«Այսօրվա բիզնեսֆորումը բացառիկ է այն առումով, որ տեղի է ունենում Ղազախստանի նախագահ Կասիմ-ժոմարտ Տոկաեւի հայաստանյան այցի նախաշեմին: Այս միջոցառումից երկու շաբաթ առաջ տեղի ունեցավ նաև Ղազախստանի գործարար շրջանակների ներկայացուցիչների այցը Հայաստան: Նման միջոցառումներն իրենց ծավալով իսկապես աննախադեպ են մեր երկրների պատմության մեջ, ինչը վկայում է փոխադարձ հետաքրքրությունների ու փոխշահավետ կապերի զարգացման մասին: Հատկանշական է, որ գիտաժողովին մասնակցում են ինչպես պետական այրեր, գերատեսչությունների ներկայացուցիչներ, այնպես էլ բիզնես աշխարհի պատվիրակներ, որոնք շահագրգռված են երկկողմ հարաբերությունների խորացմամբ: Յուրաքանչյուր մասնակցի ներկայությունն ու նրա կողմից գաղափարների արտահայտումն անգնահատելի է նախեւառաջ փորձի փոխանակման տեսանկյունից, քանի որ միայն բաց է կառուցողական քննարկումների արդյունքում հնարավոր կլինի գտնել փոխգործակցության նոր ուղիներ ու բնագավառներ, ստեղծել բարենպաստ մթնոլորտ նոր՝ ավելի ծավալուն ներդրումների համար», - ասաց Իվանովը:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեորգ Պապոյանն իր ելույթում նշեց, որ օրվա միջոցառումը հրաշալի հնարավորություն է՝ Հայաստանի ու Ղազախստանի միջև առևտրատնտեսական կապերն ընդլայնելու, ավելի խորացնելու, ինչպես նաև փոխշահավետ նոր հարաբերություններ հաստատելու համար:



«Այս համաժողովին մասնակցում են տնտեսության տարբեր բնագավառների ավելի քան 150 ներկայացուցիչներ: Երկկողմ հարաբերությունների ամրապնդման գործում առանձնակի դեր ունի Ղազախստանի նախագահ Կասիմ-ժոմարտ Տոկաեւի այցը, որը նախատեսված է հաջորդ շաբաթ: Ապրիլի 2-ին երկու երկրների փոխվարչապետներ Միեր Գրիգորյանի և Սերիկ ժումանգարինի համատեղ նախագահությամբ կայացավ տնտեսական համագործակցության գծով միջպետական հանձնաժողովի 10-րդ նիստը, որի ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ զարգացնելու առևտրատնտեսական կապերը, երկուստեք խթանելու ներդրումները, ապահովելու դրանց անվտանգությունը, ամրապնդելու ենթակառուցվածքային կապերը: Այդ ամենն ապացուցում է մեր երկրների միջև հետագա փոխգործակցության զարգացման գործում երկու կողմերի շահագրգռվածությունն ու հետաքրքրությունը», - ասաց Պապոյանը:

Նախարարի խոսքով՝ երկկողմ հարաբերություններում առկա մեծ ներուժի մասին վկայում են Վիճակագրական կոմիտեի կողմից հրատարակված ցուցանիշները, որոնց համաձայն՝ Հայաստանի ու Ղազախստանի միջև ապրանքաշրջանառությունը 2023 թվականին կազմել է 104

միլիոն դոլար՝ աճելով 2,4 անգամ նախորդ տարվա համեմատ:

«Երկկողմ փոխգործակցության ակտիվացումը թույլ կտա զգալիորեն բարելավել նշված ցուցանիշները: Վերջին տարիներին Հայաստանում արձանագրվել է տնտեսական զգալի աճ, որը պահպանվում է նաև ընթացիկ տարում: 2024 թվականի հունվարին տնտեսական ակտիվության ցուցանիշը ՀՀ-ում կազմել է 13,6 տոկոս: Մեր երկրի տնտեսության զարգացման դինամիկ աճը պայմանավորված է նաև կառավարության ջանքերով: Այդ համատեքստում առանձնակի կարևորություն է ներկայացնում կառավարության ծրագիրը, որն ուղղված է երկրի տնտեսության արդիականացմանը, որի շրջանակում պետությունը սուբսիդավորման միջոցով և լիզինգային մատչելի տոկոսադրույքներով ընկերություններին տալիս է սեփական հզորությունն արդիականացնելու հնարավորություն, որպեսզի նրանց արտադրողականության աճը և թողարկվող ապրանքները դառնան ավելի մրցունակ: Ծրագրի իրականացման ընթացքում նոր սարքավորումների ձեռքբերման և նոր հզորությունների գործարկման արդյունքում 1846 ընկերություններ ձեռք են բերել սարքավորումներ 228 միլիարդ դրամի չափով, ինչը վկայում է ծրագրի բարձր արդյունավետության մասին», - ասաց նախարարը:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾՈՒՄ ՉԻ ՏԱԼԻՄ

«ՓՈՒՆՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԵՆՔ ՄՏԱՑԵԼ»

Գեո փեթվարի 16-ին ArmLur.am-ի խմբագրությունն ահազանգ էր ստացվել Կոստայի մարզի ֆերմերներից, որ Կոստայի մարզում սարածված է աֆրիկյան ժանգախ, ինչից սասկում են խոզերը:

Ֆերմերներն այս հարցով նույն ամսվա 26-ին եկել էին էկոնոմիկայի նախարարություն, որպեսզի նախարարությունը լուծում տա իրենց խնդրին:

ArmLur.am-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն հարցում էր ուղարկել՝ պարզելու համար, թե ինչ պայմանավորվածություն է ձեռք բերվել խոզապահ ֆերմերների և էկոնոմիկայի նախարարության միջև՝ ժանտախտով վարակված և սատկած խոզերի դիմաց փոխհատուցման պահանջի վերաբերյալ:

Էկոնոմիկայի նախարարությունից մեզ պատասխանել են. «Հարկ ենք համարում

նշել, որ «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, «Հիվանդության նախնական ախտորոշումը կատարում է անասնաբուժական ծառայությունը, որը հիվանդության ախտորոշումը հաստատելու կամ հերքելու նպատակով կատարում է նմուշառում և ախտաբանական նյութի նմուշները ներկայացնում անասնաբուժական ազգային ռեֆերենս լաբորատորիա և իրականացնում է համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ:

Ուստի, հիմք ընդունելով օրենքով սահմանված դրույթը, հայտնում ենք, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հիվանդության ախտորոշման հաստատման վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է»:

ArmLur.am-ը նաև կապ հաստատեց Կոստայի ֆերմերներից մեկի հետ, ով մեզ

հետ գրուցում հերքեց էկոնոմիկայի նախարարության տված պատասխանը և ասաց, որ հանդիպման ժամանակ էկոնոմիկայի նախարարությանը ներկայացրել են իրենց խնդիրը, ասել են, որ խոզերը սատկել են:

«Մեզ 2 ամիս է արդեն ամեն 10 օրը մեկ էկոնոմիկայի նախարարությունից ասում են, որ լավ կլինի: Մենք պայմանավորվել էինք, որ փոխհատուցում պետք է լինի, բայց նորից եմ նշում, որ արդեն 2 ամիս է ոչ մի բան էլ չեն անում, հետաձգում են», - մեզ հետ գրուցում նշեց ֆերմերը:

Ֆերմերի խոսքով՝ երեկ էլ են զանգ ստացել էկոնոմիկայի նախարարությունից, և նախարարությունում խոզերի ժանտախտի հետ կապված ամեն փաստ կա՝ նկարներ, փաստաթղթեր:

ԱՆՆԱ ՄՈՒՊՈՒՆՅԱՆ

«ժողովուրդ» օրաթերթում և ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԵԿՈՒՅԹ

«ԸՆԴՀԱՏՎԱԾ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ»

ՋԻՎԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԽՏՂԱՐԿԱՅԻՆ ՖԻԼՄԸ

Արցախյան գոյամարտը հայ իրականության ամենափառավոր էջերից մեկն է, որի հանդեպ բոլորիս զգացողությունները, ցավով, վերածվել են ցավի ու չվերականգնվող անառժանադաս-վության:

1992 թվականի այս օրը Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում ադրբեջանական զինված ուժերը խաղաղ բնակչության կոտորած իրականացրին, որի հետևանքով զոհվեց մի քանի տասնյակ հայ: Այսօր կանդա-դառնանք Մարաղայի ջարդերի մասին պատմող գեղարվեստական կարճամետրաժ «Ընդհատված մանկություն» ֆիլմին: Ֆիլմը լավագույնս ներկայացնում է իրավիճակը արցախյան պատերազմի օրերին, հայերի նվիրվածությունը միմյանց նկատմամբ, համընդհանուր պայքարին, ինչպես նաև մարդկային բարձր արժեքներին: Կարճամետրաժ կինոնկարը Էկրաններ է բարձրացել 2013 թվականին, երբ դեռ հայ իրականության մեջ մեծա-տառերով գրված չէր «ամոթ» բառը եւ մենք մեզ թույլ էին տալիս պատերազմնե-րում փնտրել եւ գտնել մարդկային ու զգացականը: «Ընդհատված մանկու-թյան» գլխավոր հերոսը փոքրիկ աղջիկ է, ում Մարաղայի ջարդերի ժամանակ գերի են տանում ադրբեջանցիները: Նրան պահ են տալիս մի գյուղացի կնոջ մոտ, ում տղան անհայտ կորած է՝ միմյանց հետ «Կարմիր խաչ»-ի միջոցով փոխանակելու համար: Աղջիկը սկսում է ապրել օտար միջավայրում, որտեղ երեխաները նրան վատ են վերաբերվում, եւ տանտիրուհին



ստիպված սափրում է նրա մազերը: Ավելի ուշ աղջկան փոխանակման ծրագրի շրջանակում հանձնում են հայկական կող-մին, սակայն թրջուհու որդուն այդպես էլ չեն գտնում: Ռեժիսոր Ջիվան Ավետիսյա-նի ֆիլմն այնքան ազդեցիկ է, որ առանց պորթֆոլիոս հնարավոր չէ դիտել այն հու-տակ ներկայացնում է ադրբեջանական կողմի կատարած վայրագությունների մի մասը միայն՝ ողջ-ողջ այրել, սպանել, դա-ծանաբար ծեծել:

անժամանցելի իրավունքների եւ պայքա-րի իրավացիության մասին: Առաջին՝ «Ընդհատված մանկություն» ֆիլմին հա-ջորդել են եւս մի քանի ֆիլմեր, որոնց զգալի մասը ծնվել են միջազգային համա-գործակցությունների արդյունքում. դրանք բոլորն էլ միջազգային մրցույթնե-րի ներկայացված եւ հաջողություններ գրանցած ֆիլմեր են, որտեղ կարելի է տեսնել այնպիսի դերասանների, ինչպի-սիք են Յոնայուն Էրջադին, Ռիխարդ Զա-մելը եւ Տատյանա Սպիվակովան:

ՀՈՐԻ ԲԱՂՈՍԱՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՎԱՐՏԵՑԻՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

Հայաստանի ծանրամարտի տղա-մարդկանց թիվն անդամ Սամվել Գաս-պարյանը եւ Գարիկ Կարապետյանը ավարտեցին Ելույթներն աշխարհի գավաթի խաղարկությունում:

Թաիլանդի Պիուկետ քաղաքում ըն-թացող աշխարհի գավաթի խաղար-կության այս տարվա վերջին փուլում պայքարի մեջ մտան 102 կգ քաշային ծանրորդները:

Հայաստանի ընտրանու անդամ Սամվել Գասպարյանը պոկում վար-ժությունում մեկ հաջող մոտեցում ու-նեցավ: Նա բարձրացրեց 172 կգ: Զրում վարժությանը նա չմասնակցեց:

Ընտրանու մյուս անդամ՝ Գարիկ Կարապետյանը, պոկում կատարեց 180 եւ 185 կգ, իսկ հրում վարժությու-նում երկու հաջող մոտեցում ունեցավ՝ 212, 216 կգ: Երկամարտի 401 կգ արդ-յունքով Կարապետյանը երկրորդն է աշխարհի գավաթում:

Հայաստանի հավաքականից ավելի ուշ պայքարի մեջ կմտնեն գերծանր քաշայիններ Վարազդատ Լալայանը եւ Սիմոն Մարտիրոսյանը:

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բռնցքամարտի տղա-մարդկանց թիվը վերջին մարզումներն է անցկացնում Եվրոպայի առաջնու-թյունից առաջ: Հայաստանի բռնցքա-մարտի հավաքականի գլխավոր մար-զիչ Կարեն Աղամալյանը ներկայացրեց ընտրանու կազմը՝ 48 կգ Բարեղամ Զա-րուբյունյան, 51 կգ Ռուդիկ Գարբոյան, 54 կգ Դավիթ Եգորյան, 57 կգ Արթուր Բազեյան, 60 կգ Արթուր Սահակյան, 63,5 կգ Նարեկ Զովհաննիսյան, 67 կգ Արարատ Զարուբյունյան, 71 կգ Գուր-գեն Մադոյան, 75 կգ Վախթանգ Զա-րուբյունյան, 80 կգ Ռաֆայել Զովհան-նիսյան, 86 կգ Զամելտ Զարուբյունյան, 92 կգ Նարեկ Մանասյան, գերծանր Դավիթ Չալոյան:

«Առաջին վարկանիշային մրցաշա-րից շատ քիչ ժամանակ է անցել, բացի այդ նաև շատ ժամանակ չի մնա երկ-րորդ մրցաշարին, երբ ավարտվի Եվ-րոպայի առաջնությունը: Մեզ համար ամենակարևորը Փարիզի Օլիմպիա-կան խաղերի վարկանիշ նվաճելն է: Եվրոպայի առաջնությունը կարելու է մեզ համար, այն նաև նախապատ-րաստական փուլ է», -ասաց Աղամալ-յանը:

Այս օրերին հավաքականի ուսումնա-մարզական հավաքին մասնակցում է նաև Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի եռակի չեմպի-ոն, աշխարհի առաջնության բազմակի մեդալակիր Զովհաննես Բաչկովը, ով դեռևս վերականգնողական փուլում է ձեռքերի վիրահատությունից հետո: Նրա մասնակցությունը երկրորդ վար-կանիշային մրցաշարին դեռևս հար-ցական է:

«Հայաստանի հավաքականի կազ-մում բոլորն էլ լավ նախապատրաս-տական փուլ են անցել: Յուրաքանչյուր բռնցքամարտիկ կարող է մեդալ նվա-ճել Եվրոպայի այս առաջնություն-ում», -առանձնացրեց Աղամալյանը:

Հայաստանի բռնցքամարտի հավա-քականը Եվրոպայի առաջնության կմեկնի ապրիլի 15-ին:

ԹԱՆԳԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՅՅՈՒՄՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ

ԿԳՄՄՆ-Ն ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ Է

ՀՀ ԿԳՄՄ նախարարությունում ֆն-նանսավորում է Անի Եղիազարյանի՝ Հով-հաննես Թումանյանի քանդաքանի սֆորեթի դաշնային ազատումն անվա-վեր ճանաչելու Երևան ֆաղափ առա-ջին ասյանի ընդհանուր իրավասու-թյան ֆաղափացիական դասարանի 2024 թվականի մարտի 29-ին կայաց-րած դասական ակտի բողոքարկման հարցը:

Այս մասին հայտնում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նա-խարարությունից:

«ԿԳՄՄ նախարարությունում քննարկ-վում է թիվ ԵՂ2/44185/02/23 քաղաքացի-ական գործով Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քա-ղաքացիական դատարանի 2024 թվակա-նի մարտի 29-ին կայացրած դատական ակտի բողոքարկման հարցը: Միաժամա-նակ տեղեկացնում ենք, որ բողոքարկ-ման համար օրենքով սահմանված է մե-կամսյա ժամկետ», -ասվում է հաղորդագ-րության մեջ:

2023 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ ԿԳՄՄ նախարարությունը լուծարել էր Անի Եղիազարյանի աշխատանքային պայմանագիրը՝ առանց թույլտվության արտերկիր գործուղման մեկնելու համար:

Եղիազարյանը, համաձայն չլինելով նա-խարարության կայացրած որոշման հետ, այն վիճարկել էր դատարանում:

Օրեր առաջ Անի Եղիազարյանը «Ֆեյս-բուք»-ի իր պաշտոնական էջում հրապա-րակել էր ՀՀ Երեւան քաղաքի առաջին



ատյանի ընդհանուր իրավասության քա-ղաքացիական դատարանի վճիռը, որում ասվում է, որ Անի Եղիազարյանի հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ ԿԳՄՄ նա-խարարության՝ հայցվորին Հովհաննես Թումանյանի թանգարանի տնօրենի պաշտոնից ազատելու մասին 20. 10. 2023թ. Թիվ N 273-Ա/1 հրամանն անվա-վեր ճանաչելու, որպես հետեւանք նախ-կին աշխատանքում վերականգնելու եւ հարկադիր պարապուրդի համար միջին աշխատավարձը բռնագանձելու պա-

հանջների մասին, բավարարել ամբող-ջությամբ:

2024 թվականի հունվարին թանգարա-նի տնօրենի պարտականությունները վս-տահվել են Լեռնային Ղարաբաղի ԿԳՄՄ նախկին նախարար Լուսինե Ղարախան-յանին: Հովհաննես Թումանյանի թանգա-րանում այժմ շինարարական աշխա-տանքներ են իրականացվում, ինչի պատ-ճառով թանգարանը ժամանակավոր գործում է Հրանտ Մաթեոսյանի մշակու-թային կենտրոն-թանգարանում:


● Ապրիլի 12-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմերսիայի պետական թատ-րոնում տեղի կունենա «Մորզանի խնամին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:



ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ կուսակցության առաջին համագումարները երբ եւ ինչպես դեֆէ է գումարել: Հետաքրքիր է՝ ինչ չափանիւթներ, դահանգներ ու արգելքներ կան:

Կարապետ Սուրադյան (36 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության ստեղծման, կուսակցության ծրագրի ընդունման եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաեւ իր կազմից ընտրում է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար): Կուսակցության ստեղծման մասին որոշումն ընդունվում է կուսակցության հիմնադիր համագումարին ներկա առնվազն 100 հիմնադիր միաձայն որոշմամբ: Կուսակցության ծրագրի եւ կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ձեւավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ: Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում <http://www.azdarar.am>, հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման ժամանակի եւ վայրի մասին ծանուցում, ինչպես նաեւ կուսակցության կանոնադրության եւ ծրագրի նախագծերի հիմնական դրույթները:

«Կուսակցությունների մասին» 33 օրենք

«ԺՈՂՎՈՒՐԳ». Նշենք, որ կուսակցության՝ որպես իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից, այսինքն՝ որպես սուբյեկտ՝ կուսակցությունը սկսում է իր գործունեությունը, ձեռք բերում իրավունքներ գրանցման պահից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ երբ է մեծվում կենսաբուսակ նուսանակելը:

Հայկունի Պետրոսյան (60 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ կենսաթոշակ նշանակելը մերժելու մասին որոշում կայացվում է, եթե՝

- անձը չունի կենսաթոշակի իրավունք,
- կենսաթոշակի իրավունք ունեցող անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,
- ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները բավարար չեն անձին կենսաթոշակ նշանակելու համար:

33 աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Նշենք, որ ենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝ նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Այսօր Հայաստանի ազգային պատկերասրահի մի քանի սրահներում «Սողեռն ոճ» ցուցահանդեսը համախմբել է հայ, ռուս եւ եվրոպացի այնպիսի ականավոր նկարիչների գործեր, ինչպիսիք են Հակոբ Կոջոյանը, Վարդգես Սուրենյանցը, Մարտիրոս Սարյանը, Վալենտին Սերովը, Ռենե Լալիկը եւ այլք:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 3 - 7 + 8 + 12	Արարատ	+ 2 + 5 + 17 + 19
Կոտայքի լեռներ	- 3 - 6 + 8 + 11	Արմավիր	+ 1 + 4 + 15 + 17
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 + 14 + 16	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4 + 21 + 24
Գեղարքունիք	- 3 - 6 + 7 + 10	Վայոց ձորի նախալեռներ	+ 2 + 4 + 17 + 19
Լոռի	- 1 + 3 + 10 + 13	Սյունիքի հովիտներ	+ 5 + 8 + 14 + 17
Տավուշ	- 1 + 2 + 7 + 13	Սյունիքի նախալեռներ	+ 2 + 3 + 8 + 17
Արագածոտնի լեռներ	0 + 3 + 7 + 10	ԼՂՀ	+ 2 + 4 + 7 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6 + 15 + 18	Երեւան	+ 4 + 8 + 8 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22^ա/3, հեռ.՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 9.4.2024

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: